ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Տարեկան

Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ղեկավարի կողմից 2018թ.ընթացքում կատարված աշխատանքների մասին

Ներկայացված է 25.01.2019թ. համայնքի ժողովում:
/Ձեկ.՝ համայնքի ղեկավար Մ.Պետրոսյան/

Հարգելի համագյուղացիներ մարզպետարանի հյուրեր, և ենթակա հիմնարկների տնօրեներ թույլ տվեք Ձեզ ներկայացնելու Տանձուտի համայնքապետարանի և ավագանու կողմից 2018թ-ի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամանակահատվածում կատարված աշխատանքները:

Ընթացիկ ժամանակաշրջանում անցկացրել ենք 8 ավագանու նիստ՝ կայացրել 48 որոշումներ: Պատասխանել ենք ստացված 454 մտից գրություններից 296-ին և 299 քաղաքացիների դիմումներին:

Համայնքի ղեկավարի կողմից 2018 թ-ին ընդունվել է համայնքի ղեկավարի 137 որոշում և արձակվել է 32 կարգադրություն:

Սահմանված կարգով կազմակերպվել է գույքահարկի և հողի հարկի գանձման աշխատանքները:

Հողի հարկի տարեկան պլանը նախատեսվել 6800.0 հազ.դրամ փաստացի կատարվել է 3048.0 հազ.դ. 44.8% -ով:

Վարձակալական հողերի վարձավճարների տարեկան պլանը կազմել է 1800.0դրամ. ,փաստացի կատարվել է 2428.4 հազ.դ. , 134.9 %- ով:

Գույքահարկի գծով տարեկան պլան է նախատեսվել 5116.7 հազ.դր., փաստացի կատարվել է 4564.6 հազ.դրամ, 89.2% -ով:

Տեղական տուրք է նախատեսվել 430.0 հազ.դրամ փաստացի կատարվել է 320.0 հազ.դրամ կամ 74.4 % -ով:

Մատուցվող ծառայությունների դիմաց տարեկան պլանը նախատեսվել է 1000.0 հազ.դրամ, փաստացի կատարվել է 476.9 հազ.դրամ կամ 47.7% -ով:

Տեղական վճարներ՝ տարեկան պլան կազմել է 2600.0 հազ. դրամ փաստացի կատարվել 1371.2 հազ. դր., կամ 52,7 % որից

աղբահ. վճարներ 192.6 հազար դրամ
ծնող. միջոցներ 1108.7 հազր դրամ

Ինքնակամ կառուցված շենքերի օրինականացում նախատեսվել է 200.0 հազ.դրամ, փաստացի կատարվել է 117.8 հազ.դրամ, 58.9 %

Վարչական իրավախախտումներ տարեկան պլանը կազմել է 500.0 դրամ, փաստացի կատարվել է 600.0 կամ 120%:

Համայնքի սեփական եկամուտների տարեկան պլանը ընդամենը կազմել է 18446.7 հազ.դրամ, փաստացի կատարվել է 12926.9 հազ.դրամ, 70.1 %-ով:

Պետության կողմից համահարթեցման սկզբունքով ստացված դոտացիայի տարեկան պլանը կազմել է 31236.4 հազ.դրամ փաստացի կատարվել է 31236.4 հազ. դրամ կամ 100%-ով

Հողի օտարում նախատեսվել է 3000.0, հազար դրամ փաստացի՝ 4468.6 հազ.դրամ:

Համայնքի սոցիալապես անապահով թվով 9 ընտանիքներին տրամադրվել է դրամական օգնություն; ընդհանուր 320.0 հազ.դրամ;
Համայնքում երեխայի ծնվելու կապակցությամբ ծննդի խրախուսում է տրամադրվել թվով 12 ընտանիքների ;ընդհանուր 340.0հազար դր;

Կատարվել է խմելու ջրի խորքային հորերի պոմպերի կապիտալ վերանորոգում և ապահովել բնակիչներին անխափան ջրամատակարարում;

Կատարվել է խմելու ջրի սանիտարաքիմիական և մանրէաբանական հետազոտություններ:

Համայնքում սիստեմատիկ կատարվել է աղբաթափում:

Համայնքապետարանում ստեղծվել է հանձնաժողով՝ կատարվել է անասունների և համայնքի տարածքում գտնվող հողերի և ցանքերի հաշվառում:

Հանձնաժողովի կողմից կատարվել է հունիսյան ցանքատարածությունների հաշվառում:

Մեծ հաղթանակի 73-րդ տարեդարձի նախօրյակին խնամվել է համայնքի կենտրոնում գտնվող հուշարձանը և տարածքում կատարել ենք վարդերի տունկ, ցանել տարբեր տեսակի ծաղիկներ:

Կատարվել է համայնքի հուշարձանի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ՝ տեղադրվել են ճաղավանդակներ, նստարաններ, աղբամաններ, դեկորատիվ հենասյուններ, արտաքին լուսավորություն:

«Վարկս Էյ Էմ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից կազմակերպած «Barigortser.am» սոցիալական մրցույթը «Ուրախ մանկություն» նախագծով հաղթելու շնորհիվ համայնքում կառուցվել է խաղահրապարակ: Համայնքապետարանի ֆինանսավորմամբ խաղահրապարակի ցանկապատման և պատշաճ տեսքի ապահովման աշխատանքները նախատեսվել է իրականացնել 2019 թվականին:

2018 թվականի «Մաքուր Հայաստան» և «Մաքուր մոլորակ» ծրագրերի շրջանակում համայնքում պարբերաբար կազմակերպվել է շաբաթօրյակ, որին մասնակցել են համայնքային ենթակայության տակ գտնվող բոլոր կազմակերպությունները և բնակիչները:

Ընթացիկ ժամանաշրջանում կատարվել է համայնքի կոյուղու ցանցի մաքրման աշխատանքներ :

Կատարվել է խմելու ջրի ջրագծերի վթարների վերացման աշխատանքներ :

Կանանց միջազգային օրվա առթիվ համայնքում կազմակերպվել է միջոցառում, հանձնվել է նվերներ համայնքային ենթակայությամբ աշխատող կանանց և աղջիկներին, տարեց թոշակառուներին :

Համայնքի փողոցներում լուսավորությունը ապահովելու համար ձեռք են բերվել անհրաժեշտ փողոցային լուսատուներ և սարքավորումներ, և դրա հիման վրա վերականգնվել է մի շարք փողոցների լուսավորությունը:

Համայնքի փողոցները բարեկարգման նպատակով տարվել են աշխատանքներ :

2018 թվականի ընթացքում համայնքում գործող մանկապարտեզում, հաճախել են 50 երեխա : Մանկապարտեզը ապահոված է տաք և սառը ջրով: Տեր և տիկին Դրօ և Էլիզ Դարբիդյանների բարեգործությամբ և համայնքապետարանի միջոցներով <<Տանձուտի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի բակում կառուցվել է մանկական խաղահրապարակ :

Համայնքի դպրոց հաճախող 6 տարեկան երեխաներին սեպտեմբերի 1-ի առիթով հանձնվել են նվերներ՝ պայուսակներ գրենական պիտույքներով:

2018 թվականի ընթացքում գազաֆիկացվեց Համայնքի մշակույթի տունը;

Համայնքում Ամանորի կապակցությամբ համայնքի երեխաների համար մշակույթի տանը կազմակերպվել է միջոցառում և 2-6 տարեկան երեխաներին հանձնվել են ամանորյա նվերներ :

Համայնքապետարանը աշխատավարձի պարտքեր չունի:

2019 թվականի կանխատեսվող եկամուտները /վարչական բյուջե/

Եկամուտներ է նախատեսվել ընդամենը 51803.1 հազ. դրամ, որից

Հողի հարկ	8000.0
Գույքահարկ փ/միջոցներից	5677.4
Գույքահարկ շենք.շին. և իրավ. անձ	324.5
Մատուցվող ծառ. վճար ընդ. ,որից	1000.0
Խմելու ջուր	1000.0
Տեղական վճարներ	2650.0
Աղբահանության վճար	800.0
Ծնողական միջոցներ	1800.0
Աճուրդի մասն.վճար	50.0
Ինքնակամ կառ.շին.օրին.	200.0
Վարչական իրավախ.մուտք	200.0
Վարձակալական հողի վճարներ	2000.0
Տեղական տուրքեր	430.0
Ֆին. համահարթ. դոտացիա	31321.2

2019 թվականի կանխատեսվող ծախսերը /վարչական բյուջե/

Փողոցային լուսավորություն 1600,0
Կեղտաջրերի հեռացում 450,0
Ջրամատակարարում 3700,0
Սպորտ 150,0
Աղբահանություն 1715,0
Անասնաբուժական ծառ 880,0
Ճանապարհի վերանորոգում 800,0
Գրադարան 1030,0
Մշակույթի տուն 3100,0
Այլ մշակութային կազմակերպություններ 1100,0
Մանկապարտեզ 8300,0
Սոցիալական օգնություն 1200,0

Սիրելի համագյուղացիներ հ ամայնքն ունի բազմաթիվ չլուծված խնդիրներ:
Հետագա հրատապ ծրագրերում նախատեսված է մանկապարտեզի կապիտալ վերանորոգում և Խմելու ջրի ջրագծերի վերանորոգում, սակայն համայնքը չունի համապատասխան միջոցներ և ակնկալում է պետական աջակցություն և այլ ներդրողներ;

Հ ամ այ ն ք ապե տար ան ի կողմից արվում է ամեն ինչ աշխատանքները կազմակերպված և արդյունավետ անցկացնելու համար:

Համայնքի հետևյալ հիմնախնդիրներն են

1. Մանկապարտեզի շենքի վերանորոգում
2. Նոր ջրագծի կառուցում
3. Հուշարձանի վերանորոգում
4. Համայնքապետարանի շենքի վերանորոգում
5. Համայնքի կոյուղու վերանորոգում
6. Փողոցների գազաֆիկացում
7. Ճանապարհների վերանորոգում
8. Մշակույթի տան վերանորոգում

Տանձուտ համայնքի ղեկավար՝ / Մ.Պետրոսյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ղեկավարի 2018թ. տարեկան հաշվետվության

կայացած 25 հունվարի 2019թ. ժամը 11^{00}-ին

Մասնակցությամբ ավագանու անդամների, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների և համայնքի թվով 44 բնակիչների:

նախագահությամբ՝ Մ. Միքայելյանի

քարտուղարությամբ՝ Գ. Խուրշուդյանի

Լսեցին.- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ղեկավարի 2018թ. տարեկան հաշվետվությունը

Արտահայտվեցին համայնքի բնակիչներ Հրաչյա Մինասյանը, Հարություն Հայրապետյանը, Աշոտ Խաչատրյանը, Մանուկ Թադևոսյանը, Սարգիս Գուլինյանը և Վարդևան Մանուկյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ համայնքի ղեկավարը իր ելույթում մանրամասն ներկայացրեց կատարված աշխատանքները և համայնքի ղեկավարի 2018 թվականին կատարված աշխատանքները գնահատումենք բավարար:

Որոշեցին –

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ղեկավար Մխիթար Պետրոսյանի 2018թ. տարեկան հաշվետվությունը կատարած աշխատանքների մասին գնահատել բավարար:

Նիստի նախագահ՝ Մ. Միքայելյան

քարտուղար՝ Գ. Խուրշուդյան

ՔԱՂՎԱԾՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ղեկավարի 2018թ տարեկան հավետվության հաշվետու ժողովի արձանագրությունից

Կայացած 25 հունվարի 2019թ. ժամը 14^{00}-ին

Մասնակցությամբ - ավագանու անդամների, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների և համայնքի թվով 44 բնակիչների

նախագահությամբ՝ Մ. Միքայելյանի

քարտուղարությամբ՝ Գ. Խուրշուդյանի

Լսեցին.-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ղեկավարի 2018թ. տարեկան հաշվետվությունը կատարած աշխատանքների մասին:
/զեկ. Մ.Պետրոսյան/

Արտահայտվեցին համայնքի բնակիչներ Հրաչյա Մինասյանը, Մարդիկ Շահնազարյան, Մանուկ Թադևոսյանը և Վարդևան Մանուկյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ համայնքի ղեկավարը իր ելույթում մանրամասն ներկայացրեց կատարված աշխատանքները և համայնքի ղեկավարի 2018 թվականի ընթացքում կատարված աշխատանքները գնահատում ենք բավարար:

Որոշեցին –

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ղեկավար Մխիթար Պետրոսյանի 2018թ. տարեկան հաշվետվությունը կատարած աշխատանքների վերաբերյալ գնահատել **բավարար**:

2. Ժողովում արձանագրվեց համայնքում առկա հետևյալ հիմնախնդիրները.

1. Մանկապարտեզի շենքի վերանորոգում

2. Նոր ջրագծի կառուցում

3. Հուշարձանի վերանորոգում

4. Համայնքապետարանի շենքի վերանորոգում

5. Համայնքի կոյուղու վերանորոգում

7. Ճանապարհների վերանորոգում

8. Մշակույթի տան վերանորոգում

3. Հանձնարարել համայնքի ղեկավարին բարձրացված հարցերի լուծման համար դիմել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան համապատասխան աջակցություն և օգնություն ստանալու համար:

Նիստի նախագահ՝ Մ. Միքայելյան

քարտուղար՝ Գ. Խուրշուդյան

Իսկականի հետ ճիշտ է Գ. Խուրշուդյան